

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ե Լ ՈՒ Վ

2013 թվապահի ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 նոյեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 18.09.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր քաղաքականությունը, հետազոտելով քննության առարկա պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2013թ. հունիսի 25-ին Երևանում՝ երկու երկրների զինված ուժերը, այլ զորքերը, զինվորական խմբավորումները, իրավապահ մարմինները, հատուկ ծառայությունները և զորքերի (ուժերի) տարածաշրջանային խմբավորումները սպառազինության բարձր արդյունավետության ու հեռանկարային համակարգերով համալրելու և հավաքական անվտանգության համակարգը տեխնիկական տարրով կազմավորելու նպատակով:

2. Պայմանագիրն ստորագրելիս հաշվի են առնվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» 2003թ. հունվարի 17-ին Մոսկվայում ստորագրված միջկառավարական համաձայնագրի դրույթները (Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 2003 թվականի մարտի 26-ին):

3. Պայմանագրով սահմանվում է ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման իրականացման կարգը, որը ներառում է սպառազինություն, ռազմական տեխնիկա, աշխատանքներ և ծառայություններ, մտավոր գործունեության արդյունքներ, այդ թվում՝ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքներ և ռազմական ոլորտի տեղեկատվություն:

4. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների իրականացումը լիազորված կազմակերպությունների

կնքած պայմանագրերով՝ առանց ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման (արտահանման) լիցենզիայի տրամադրման,

- ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումն իրականացնել այն նույն բնութագրերով և նույն համալրմամբ, որով իրականացվում է իր սեփական ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների համար,

- պետական գաղտնիք պարունակող ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման համար պայմանագրերի կնքումն իրականացնել օրենսդրության համաձայն և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» 2002թ. նոյեմբերի 5-ի համաձայնագրի դրույթներով,

- ռազմական նշանակության արտադրանքը մյուս երկրի մաքսային տարածք տեղափոխել համապատասխան լիազորված մարմինների կողմից տրված ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման հաստատված անվանացանկերից քաղվածքներով՝ դրանք ազատելով մաքսային վճարներից,

- արտադրանքը մատակարարող կողմի համար ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար,

- ապահովել ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ստացվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ստացվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին» 2005թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի դրույթներին համապատասխան,

- ապահովել ռազմատեխնիկական աջակցություն մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի ընդունման և որակի վերահսկողության մասով,

- առանց մատակարարող կողմի նախնական գրավոր համաձայնության՝ չվաճառել և չփոխանցել երրորդ կողմին ռազմական նշանակության արտադրանք, դրա վերաբերյալ գիտական և տեխնիկական տեղեկատվություն, հետազոտությունների արդյունքներ, ինչպես նաև գյուտեր, նոու-հաու և այլ տեղեկություններ:

5. Պայմանագրով սահմանված են նաև դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները, գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգն ու պայմանները, ինչպես նաև պայմանագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերի լուծման կարգը, որոնք համահունչ են միջազգային իրավական ակտերին ներկայացվող պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի հունիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 նոյեմբերի 2013 թվականի

ՄԴՈ-1123